սպասէ ոմն լինել պատրիգ, կամեսցիս և դու։ Եւ ոչ կամէր նա և բնաւ հաղորդէր ընդ խօսս նոցունց։ Եւ ի միում գիշերի ինքնին երթայ առ նա և ասէ. Ահա՛ այսքան դրամ քեզ և արքայի, արասցես զիս պատրիգ։ Եւ ասէ. Նա որ էր պատրիգ՝ չև ևս էանց ամիս մի ի վերայ որ եկն և բազում դրամով ապա պրծաւ ի սոցանէ, ընդէ՞ր առնես դու։ Եւ անարգանօք ի բաց վարէ, և ասէ. Եթէ միանգամ եկեսցես առաջի իմ, գիտասցես զի մեռանելոց ես։ Այսպէս նստէր յեկեղեցին յԷտրէնու թէ Սակս բանի ինչ եկեալ եմ, և երդուի թէ Ոչ եմ ի գործն զոր դուքն կարծէք։ Զայն բան իմացեալ քաղաքացոցս որ էին անդ վասն վաճառուց, և երթեալ առ նա բազում բանս անարգանաց ասեն թէ Ա՛յր անօրէն և անհաւատ, քանի՛ քանի չհանգչիս և մինչև ցե՞ր մատնես զեկեղեցիս մեր ի գրունս բռնաւորաց։ Նոյնպէս և Աբրօ Զէլէպին զայս բան առաքէ նմա բազում ահացմամբ։ Եւ նա երկուցեալ ելեալ անտի նստէր ի Թէքիրտաղ և ի Կէլիպօլի. և վարդապետքն ոչ խօսէին նմա և ոչինչ, և ուր և երթայրն ընդունէին զնա, զի մի զԹումային մեղադրանս դիցեն վարդապետացն։ Եւ գայր նա ի քաղաքս եւ սպասէր գործոյն և զպարզամիտս պատրէր թէ Զքիւրէքճին ի վերայ իմ առնեմ և հանեմ զայն հարկ ի ժողովրդենէն. և այլ թէ Զեկեղեցիքն չինելոյ աղաւաւ առնեմ զպատրիգութիւն։ Եւ առաքեաց քէհեա վէզիրին թէ Ահա՛ տալիպ ունիս տեղիդ, և ոչ անսաց. կրկին յղեաց մարդ թէ եկեսցէ զի մուղարէրլէմէ աբարից ի վերայ նորա, քանզի աղճատեն զանուն իմ ահա՛ թէ ոչ է ևեթ քէհեան։ Մինչդեռ էր Եղիազար աստ, և նա ևս ոչ կամեցաւ զհաստատիլն Մարտիրոսին և թոյլ ետ զի առցէ միւսն վասն գժտութեան որ մտեալ էր բազում անգամ ի մէջ նոցա. այլ և թէ Ղազարն լինի փաթրիգ՝ առաւել խոնարհեսցի նմա։